Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(Հայաստանի գրողներն Ադրբեջանում)

Արդեն հեռվից, երբ մոտենում էինք Գանձակին՝ գծագրվում էր նրա բնորոշ ոճը—հպարտ չինարիները և սևահեր նոճիները:

Դուրս ենք գալիս երկաթգծի սահմաններից, ուր աջ ու ձախ թագավորում է երկաթն ու մեքենան և թևակոխում երբեմնի ասիական քաղաքը:

Ասում են, թուրքական քաղաքներից ամենահնամոլը Գանձակն է եղել:

Ասում են, դեռ էլի ուժեղ դիմադրում է նա նորի դեմ:

Բայց փողոցը, որ ամենից բացահայտ մատնողն է մի քաղաքի ներքին կյանքի՝ ցույց է տալիս այդ կռվի հետևանքը:

Քաղաքի «ակտիվը», երիտասարդությունը՝ թուրք տղա, աղջիկ ազատ զբոսնում են կամ գնում են իրենց կոլեկտիվները: Չադրավոր կանանց հետ միասին նաև չադրան դեն գցածներն ազատ շրջում են մագազինների, կոոպերատիվների առջև:

Մոլլան ինչ-որ չի երևում:

Նախկին մարդիկ՝ երևի հարուստ կայքի, կարողության տեր՝ հիմի արդեն պատմության հանձնված, սրված դեմքերով խեթ-խեթ մտիկ են տալիս դես ու դեն:

Փողոցները բավական փոշոտ, բայց ուղիղ, տանում են քաղաքի տան մասերը, ու շարժում չկա այլևս: Իսկական գավառ:

Շատ մոտ պետք է նայես քաղաքի կյանքին, որ նկատես այն եռալ սկսող նոր կյանքը, որ հաղորդակցության միջոց է պահանջում ամենուրեք:

Թվում է, ուր գնում ես՝ աչքիդ առաջին գցվում է մի հալածող բառ.

— Закавтопромторг.

Հարձակվում են ամեն մի ավտոբուսի վրա, պահանջում, կռվում տեղի համար:

Կայարանն ու գործարաններն են այդ հապճեպի ձգող ուժերը:

Եվ իրոք, այս վերջիններս են քաղաքի արթնացնող ժամացույցները, ազդակը, նոր կյանքի գործարանները:

Վիթխարի յուղի գործարանը բանվորական մասսան ճնշում է իր ծավալով ու տեմպով: Գործը դրված է օրինակելի: Տեխնիկական մասի վարիչն անգամ, գեղեցիկ, կտրուկ ոճով բացատրում է գործարանի տեխնիկան:

Պակաս չի հրապուրում սելեկցիոն կայանը իր հետաքրքիր փորձերով, որ Ադրբեջանի գյուղատնտեսական կուլտուրայի համար մեծ ապագա է պատրաստում: Մյուս գործարանները դղրդում, ծխում են: Գանձակը դառնում է գործարանային քաղաք:

Անկարելի է կանգ առնել փաստերի, դեպքերի և տեսարանների հորդ հաջորդությունների առջև:

Ես կուզեի առ այժմ հիշել միայն Հաջիքենդը, որ արտակարգ ու անսպասելի բան եղավ մեզ համար:

Պատվիրակությունը գնում էր շեֆություն վերցնելու Ադրբեջանյան Կարմիր բանակում:

Խանդավառ ընդունելության արարողությունը դարձավ մի անպատմելի, բայց պատմական ցույց: Ամբողջ բանակը ծավալվեց մեր առջև, բարև տալով: Առույգ, հուժկու բանակայինների ուռաներն անտառի աղմկի պես գնում էին ծայրից ծայր:

Բլուրներից թնդանոթների սալյուտները հրողջունելով մեզ՝ թնդացնում էին շրջակայքը:

Հետո քառակուսի բակ կանգնեց բանակը, մեջ առնելով մեզ:

Ողջույնների մեջ, որով մեզ դիմում էին զինկոմը, հրամկազմի անդամները, թուրք, հայ, ռուս բանակայինները լսվում էր մի նոր լեզու, թվում էր՝ նոր մարդկության լեզուն:

Անդրկովկասյան ժողովուրդների համերաշխությունը կարծես զինված կանգնած էր մեր հանդեպ և պատրաստ էր կռվելու այնբոլոր թշնամիների դեմ, որոնք կուզենային այդ ոոպեին սերմանել թշնամության սերմը:

Պատվիրակության նախագահ՝ ընկեր Շիրվանզադեն համբուրվելով թուրք բանակայինի հետ՝ հաստատեց համերաշխությունը հայ և թուրք աշխատավորության առջև, իսկ նրա հայտարարությունը, որ Հայաստանի Խորհրդային Գրողների ֆեդերացիան[1] վերցնում է N գնդի շեֆությունը՝ խանդավառ և փոթորկալի ուռաների մեջ կնքեց այդ:

Բանակայինները հանկարծ հարձակվեցին պատվիրակության վրա և սկսեցին վեր նետել…

Այդպես ամբողջ բանակը դրոշակով, շարքերով անցավ պատվիրակության առջևից դեպի վրանները:

«Կեցցե՛ Կարմիր Ադրբեջանը, կեցցե՛ նրա Կարմիր բանակը, կեցցե՛ աշխատավոր ժողովուրդների եղբայրությունը, նրանց կուլտուրական կապը»:

Այս և սրա նման մեր լոզունգներին զորքը պատասխանում էր թնդագին ուռաներով:

Բանակի ակումբում պատվիրակությանը պատվեցին ճաշով, ուր ճառերով հանդես եկան բանակի գլխավոր հրամանատարը, մյուս հրամկազմը, բայց առանձին հուզմունքով մեր շեֆարկյալ գնդի հրամանատարը:

Հրաշալի անտառների մեջ կորած Հաջիքենդը և նրա բանակը, որը թողինք սրտագին ուռաների մեջ, այդ կանաչ ծառերը, դալար բանակայինները, այդ զարթնող աշխատավորության հուժկու կերպարանքներն անմոռանալի կմնան մեր հիշողության մեջ:

Ժամերը թռան աննկատելի, մենք իջանք ցած դեպի Գանձակ:

Գնում ենք Մարդաքյան:

Հեռուն, դեպի ձախ և դիմացներս բիզ-բիզ ցցվում են Բալախանու, Սարուխանու «անտառները»[2]:

Հիշում եմ այս վայրերը մի քսան տարի առաջ: Հիշում եմ այն զգացումը, թերևս վախը, որով այցելել եմ նավթի աշխարհը: Բոլոր մանկության հասակիս երևակայությունը դժոխքի, նրա կուպրի հավիտենական կրակի մասին կենդանացել է միշտ այս մռայլ վայրերում:

Մուր, կեղտ, բանվորական որջեր, որոնց մեջ դաժան, գազազած, ճնշված բանվորն էր ապրում: Եվ որքան տաժանելի էր այստեղ «դրամի» հանքը, ամենազոր կապիտալի ձեռք բերելը, այնքան ճոխ, շվայտ, հղփացած էր այդ դրամատիրոջ կյանքը Եվրոպայի շքեղ ու հովասուն ամառանոցներում:

Դրախտն այնտեղ, դժոխքն այստեղ:

Միշտ թվացել է ինձ, թե այստեղ երկրի պատռված, ծակծկած կողերից սև թարախ է հոսում, որի մեջ խեղդվում են ամենից մոռացված, ճնշված մարդիկ:

Առաջին աչքի զարկող առարկան և սիրտը թեթևացնող տեսարանը— դա բանվորների բնակարաններն են:

Դեղնավուն կրաքարից շինած, գողտրիկ վիլլաներ, լույսի, մաքրության, հարմարության օազիսներ շրջապատի սևամորթ վիշկաների մեջ կամ մեկուսի, հարմար բլուրների վրա:

Չկա այն ճնշող, մղձավանջային պատկերը, մարդու սիրտը թեթևանում է տեսնելով այդ բնակարանները:

Չգիտեմ որքան են շատ այդ բանվորական բնակարանները և որ տոկոսն է բավարարված, բայց աչքի տակով նրանք բավական թիվ են կազմում:

Սուրախանի: Փողոցների աջ ու ձախ կողմն ընկած տների մեջ դարձյալ աչքի են ընկնում նոր շենքեր: Բայց ահա մի ուրարտական տեսարան: Մի արկղաչափ կամի վրա նստել է «երկրագործը» և կամ է քշում:

Կատակ չի՞ անում արդյոք: Ի՞նչ պիտի կալսի և ի՞նչ պիտի ստանա դրանից: Տեսնո՞ւմ է արդյոք իր շուրջի վիշկաները և ո՞ր դարից է մնացել նա:

Ահա և երկրորդը, երրորդը:

Ուրեմն, եթե բանը մնա այդ «երկրագործին», նա կուլտուրան պիտի պահի ուրարտական գծի վրա: Համառ հետամնացություն, ատավիզմ, որ օղակվելով անգամ տեխնիկայի վերջին պարագաներով՝ դեռ ապրում է գյուղացու մեջ: Ահա և Մարդաքյանը, Բաքվի նախկին տերերի վիլլաները, ուր ամառները գալիս էին նրանք հանգստանալու հանգիստ կյանքից: Որքան դրամ, որքան ստրկություն է ծախսվել սրանց վրա:

Այցելում ենք բանվորական հանգստյան տունը, որ նոր է շինած, «բանվորների փողով»: (Եթե միայն կա մի շենք աշխարհիս վրա, որ շինված չլինի «բանվորական փողով»: Եթե միայն քիչ չեն բուրժուամիտ մարդիկ, որ հեգնանքով և տխրությամբ հոլովում են— «Թաղիևի տունն է, որ խլել են բանվորները», «իրենք հո չեն շինել»...):

Հանգստյան տունը օրինակելի է ամեն կողմից: Մաքուր, լուսավոր ճաշարան, մաքուր, լուսավոր ննջարան, մաքուր, լուսավոր մարզատուն, բոլորը մաքուր, լուսավոր, գեղեցիկ, սրտաբաց:

Բանվորները շրջապատում են մեզ–նրանք բոլորն առողջ դեմքով և խաղաղ աչքերով արտահայտում են այն գլխավոր հարցը, որ կուզենայիր տալ— այսինքն՝ «գո՞հ ես»:

Մեզանից մեկը հենց այդ հարցն էլ տալիս է մի բանվորի: Առաջ է գալիս հետաքրքիր մի խոսակցություն: Բանվորը գոհ չէ իր «սեփական» բնակարանից , որը նման չէ «պալատին»:

— Դուք այս պալատն եք տեսնում, եկեք իմ բնակարանն էլ տեսեք:

Ո՞վ է սա, անգիտակից մե՞կը հազարից, թե սա էլ «աճման հիվանդություն» ունի:

Իսկ ու՞մն են այն գողտրիկ վիլլաները, որ ճանապարհին տեսանք, ո՞վ է ապրում Արմենիքենդ հոյակապ քաղաքում, եթե ոչ բանվորները:

— Դրամի մեկ երեսն է այս հանգստյան տունը,— նկատում է մի ոչ բանվոր մեկը:

Դրամի մեկ երե՞սը: Թող այդպես լինի: Թող մյուս երեսը վատ լինի: Բայց չէ՞ որ ժամանակ կար, որ դրամի երկու երեսն էլ վատ էր, և հիմա լավանալով մի երեսը, լավանալու է և մյուս երեսը: Սոցիալիզմը չի կառուցվում երկուս ու կես ժամում:

Ո՛չ, անգիտակից ընկեր, դուք «աճման հիվանդություն» ունեք: Շատ եք պահանջում՝ ավելի շատ եք պահանջում և ձեր ախորժակը ատամի տակին է: Բայց մի փոքր թույլ հիշողություն ունեք միտ բերելու այն օրերը, երբ ապրում էիք որջի մեջ: Իսկ եթե տեսնել եք ուզում այդ որջերը,— շատ հեռու չեն նրանց ավերակները՝ գնացեք տեսեք:

Բայց անցնենք: Հրաշալի հանգստյան տունն այցելելուց հետո բան չէր մնա թերևս ավելացնելու Մարդաքյանի նվաճումներին, բայց այնտեղ անապատանների տունը, իր դպրոցով, խոհանոցով, ննջարանով, արևով և կարող ձեռքի ղեկավարությամբ՝ վեր է ամեն գովասանքից:

Արևի տակ, մերկ տղաներն առույգ, ուրախ ման են գալիս, հրճվում:

Բուսաբանական այգին, որ տեղավորված է ընդարձակ մի պարտեզում, օրինակելի ձեռնարկություն է: Հատ ու կտոր ու շտապ այս շտրիխներում անկարելի է պատկերացնել սրա, և առհասարակ բոլոր տեսածներիս, ոչ միայն մանրամասները, այլև ընդհանուր տպավորությունը:

Բաքուն աճում է էպոսի հսկաների պես—օրեցօր:

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(Հայաստանի գրողներն Ադրբեջանում)

(Էջ 94)

Մեկն է այն հոդված-ակնարկներից, որ գրել է 1929 թ. հունիսին, հայ գրողների պատվիրակության կազմում այցելելով Վրաստան և Ադրբեջան: Պատվիրակությունը Ադրբեջանում եղել է հունիսի 22-ից մինչև 26-ը: Պատվիրակության կազմը՝ Ալ. Շիրվանզադե (նախագահ), Դ. Դեմիրճյան (փոխնախագահ), Ալազան (քարտուղար), Ավ. Իսահակյան, Նար-Դոս, Ստ. Զորյան, Միք. Մանվելյան, Մ. Սարյան, Ան. Վարդանյան, Գ. Մահարի, Արաքս, Վ. Միրաքյան, Վ. Թոթովենց, Գ. Սարյան, Մ. Արմեն, Էդ. Խոճիկ, Ս. Տարոնցի և ադրբեջանցի պրոլետ-գրող Նարիման Ֆախրի:

Առաջին անգամ տպագրվել է Կ, 1929, N 143: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիան հիմնադրվել է 1929 թ. ապրիլի վերջին պրոլետարական գրողների միության և աշխատավորական գրողների միության (ուղեկիցներ) հիմքի վրա:

2 Նկատի ունի Բաքվի Բալախանի և Սուրախանի քաղաքամասերի նավթային աշտարակները (բուրգերը):